## Փետրվարի 16-ը Մյասնիկյանի շրջանի ապատագրման 70-րդ տարեդարձի օրն է

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՐԳԵԼԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐ
ԵՎ ԹԻԿՈՒՆՔԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐ,
ՍՐՏԱՆՑ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՁԵԶ
ԳԵՐՄԱՆԱ-ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԶԱՎԹԻՉՆԵՐԻՑ
ՀԱՐԱԶԱՏ ՇՐՋԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ
70-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Այս պանծալի օրերին մենք բոլորս խորին երախտագիտությամբ խոնարհում ենք մեր գլուխները ավագ սերունդների մարտական և աշխատանքային սխրանքի առաջ: Տոգորված ենք հպարտության հատուկ զգացումով մեր հայրերի ու պապերի խիզախության և արիության հանդեպ, հարգանքի արժանի տուրք ենք մատուցում բոլոր վետերաններին: Միաժամանակ դառնորեն սգում ենք նրանց համար, ովքեր քաջի մահով ընկան մարտի դաշտում: Եվ խոստանում ենք վառ պահել Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների անմահ հիշատակը:

Հաստատ համոզված ենք, որ հայրենիքի ազատության և անկախության համար սովետական ժողովրդի ցուցաբերած հերոսությունը առաջիկայում ևս կծառայի որպես ամուր հիմք երիտասարդության հայրենասիրական դաստիարակության և հարավատ երկրի բարգավաճման ու ժողովրդի բարօրության համար:

Թանկագին հայրենակիցներ, սրտանց ցանկանում ենք ձեզ խաղաղություն և ամենայն բարին, ամուր առողջություն, երջանկություն, ապագա մեծ հաջողություններ ստեղծարար աշխատանքում:

# ԼՐԱՑԱՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՑՄԱՆ 185-ԱՄՅԱԿԸ

Անդրկովկասում տիրապետություն ունենալու համար 1804 թվականին սկսված և մինչև 1813-ը տևած, ապա 1826-1828 թվականներին Ռուսաստանի և Պարսկաստանի միջև տեղի ունեցած դաժան պատերազմները ավարտվել են Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումով և Արևելյան Հայաստանի միացումով Ռուսատանին:

185 տարի առաջ հայ և ռուս ժողովուրդների տարած այդ համատեղ հաղթանակը բազմադարյան եղբայրական համագործակցության, բարեկամական հարաբերությունների և փոխօգնության վառ օրինակներից մեկն է:

Դեռևս 18-րդ դարի վերջին Պարսկաստանը Անգլիայի և Ֆրանսիայի աջակցությամբ փորձեց գրավել Վրաստանը (Աղա-Մահմեդ խանի ներխուժումը 1795-ին): Ռուսաստանը դրան պատասխանեց 1796 թվականի արշավանքով: 1801-ին Վրաստանը (Քարթլին և Կախեթը) կամավոր միացավ Ռուսաստանին, այնուհետև միացան Մեգրելիան (1803), Իմերեթիան և Գուրիան (1804):

Անդրկովկասում իր դիրքերն ամրապնդելու համար Ռուսաստանը 1803 թվականին սկսեց առաջխաղացումը դեպի հարավ: Կովկասում գլխավոր հրամանատար գեներալ Պ. Դ. Ցիցիանովը 1804 թվականի հունվարի սկզբին գրավեց Գյանջայի խանությունը: Նույն թվականի մայիսի 23-ին պարսկական կառավարությունը վերջնագիր ներկայացրեց Ռուսաստանին, պահանջելով Անդրկովկասից դուրս բերել կորքերը, իսկ երբ վերջնագիրը մերժվեց, սկսվեցին ռազմական գործողությունները: Պարսկաստանի գլխավոր ուժերը (30 հազար մարդ) գահաժառանգ Աբբաս-Միրզայի հրամանատարությամբ կենտրոնացած էին Երևանի խանությունում: Ռուսական կորքերի և պարսիկների առաջին լուրջ ճակատամարտը տեղի ունեցավ Փոքր Ղարաքիլիսա գյուղի մոտ: Հունիսի 10-ին գեներալ Ս.Ե. Տուչկովի առաջապահ կորաջոկատը պարտության մատնեց պարսիկներին: Իսկ ռուսական բանակի գլխավոր ուժերը գեներալ Ցիցիանովի գլխավորությամբ մտան Երևանի խանության սահմանները և շարժվեցին դեպի Էջմիածին, որտեղ գտնվում էր Աբբաս-Միրզայի մեծաքանակ բանակը: Շրջանցելով Էջմիածինը, Ցիցիանովը հունիսի 25-ին գրավեց Քանաքեռը, իսկ հունիսի 30-ին պարտության մատնեց պարսկական 27 հազարանոց բանակը: Հուլիսի 2-ին ռուսները պաշարեցին Երևանի բերդը: Գեներալ Ցիցիանովը սկսեց բանակցություններ վարել Երևանի խանի հետ՝ առանց դիմադրության բերդը հանձնելու վերաբերյալ: Մահմադ խանը ժամանակ շահելու և օգնություն ստանլու նպատակով դիտմամբ ձգձգում էր բանակցությունները: Սկսված ուժեղ շոգը, պարենի ու ռազմամթերքի պակասը հարկադրեցին Ցիցիանովին սեպտեմբերի 4-ին վերացնել պաշարումը և շարժվել դեպի Թիֆլիս:

Մինչև 1805 թվականի ամռան ռազմական գործողությունների վերսկսումը, Ռուսաստանին միացան Ղարաբաղի, Շիրվանի, Շաքիի խանությունները, Շորագյալի սուլթանությունը: 1805-ի հունիսին Աբբաս-Միրզան մեծաքանակ բանակով հարձակվեց Ղարաբաղի վրա, պաշարեց Շուշիի բերդը, որը պաշտպանում էր ռուսական փոքրաթիվ կայազորը: Շուշիի պաշտպաններին օգնության եկած գնդապետ Պ. Մ. Կարյագինի ջոկատի (շուրջ 500 մարդ) ճանապարհը Ասկերանի կիրճում փակեց պարսկական բանակը: Ասկերան գետի մոտ, ապա Շահբուլաղ բերդում շրջափակված Կարյագինը, հայերի օգնությամբ կողմնորոշվելով, կարողացավ ետ մղել պարսիկների գրոհները, իսկ հուլիսի 28-ին, Զագամի ճակատամարտում ջարդեց պարսիկներին:

Միևնույն ժամանակ 1805-ի հունիսին ռուսական հրամանատարությունը արշավանք ձեռնարկեց, ծովային ուղիով Բաքուն և Ռեշտը գրավելու նպատակով: Նույն թվականի նոյեմբերին գեներալ Ցիցիանովը շարժվեց դեպի Բաքու, բայց ուխտադրժորեն սպանվեց 1806-ի փետրվարի 8-ին՝ Բաքվի խանի հետ բերդը հանձնելու վերաբերյալ բանակցությունների ժամանակ: Ռուսական կորքերը հեռացան Բաքվից: Գլխավոր հրամանատար նշանակվեց գեներալ Գուդովիչը: 1806-ի ամռանը Աբբաս-Միրզան 20 հազարանոց բանակով ներխուժեց Ղարաբաղ, բայց գեներալ Պ. Ֆ. Նեբոլսինը հունիսի 13-ին Խոնաշենի կիրճում (Շահբուլաղի և Ասկերանի միջև) ջարդեց նրան, հարկադրեց նահանջել դեպի Արաքս: 1806 թվականի ընթացքում ռուսական կորքերը գրավեցին Դերբենդը, Բաքուն, Ղուբան:

1806 թվականին սկսված ռուս-թուրքական պատերազմը ստիպեց ռուսական հրամանատարությանը ժամանակավոր փինադադար կնքել Պարսկաստանի հետ: 1808-ին ռազմական գործողությունները վերսկսվեցին, սեպտեմբերին գեներալ Գուդովիչը արշավանք ձեռնարկեց Երևանը ազատագրելու համար: Աշտարակի մոտ սեպտեմբերի 29-ին ջախջախեց Հուսեյն-Ղուլի խանի 4 հազարանոց հեծելազորը, սեպտեմբերի 30-ին գրավեց Էջմիածինը, հոկտեմբերի 9-ին պաշարեց Երևանի բերդը: Գեներալ Նեբոլսինի կորաջոկատը հոկտեմբերի 28-ին Ղարաբաբայի մոտ պարտության մատնեց Աբբաս-Միրզային և նոյեմբերի 1-ին գրավեց Նախիջևանը՝ զրկելով պարսիկներին պաշարված Երևանի բերդին օգնություն ցույց տալու հնարավորությունից: Բայց Երևանի բերդի երկրորդ պաշարումն ու գրոհը նույնպես ավարտվեց անհաջող: Նոյեմբերի 30-ին Գուդովիչը նահանջեց, իսկ դեկտեմբերի 1-ին Նեբոլսինը թողեց Նախիջևանը: Գուդովիչին փոխարինեց գեներալ Ա. Պ. Տորմասովը, որը վերսկսեց հաշտության բանակցությունները: Սակայն պարսկական կորքերը Ֆաթե-Ալի շահի հրամանատարությամբ անսպասելի ներխուժեցին Գյումրի-Արթիկի շրջանը: Ռուսական կորքերը ետ մղեցին շահի կորքերի հարձակումը, ինչպես նաև խափանեցին Գյանջան գրավելու Աբբաս-Միրզայի փորձը: 1810 թվականի հունիսի 17-ին գնդապետ Կոտլյարովսկու կորաջոկատը գրավեց Մեղրին, իսկ հուլիսի 6-ին գրոհեց Աբբաս-Միրզայի բանակատեղին Արաքսի ափին և ստիպեց նրան կորքերը դուրս բերել Ղարաբաղից:

Ձախողվեց նաև Երևանի սարդար Հուսեյին-Ղուլի խանի 10 հազարանոց կորքով Ախալցխայում թուրքերին միանալու և միասին Վրաստան ներխուժելու փորձը: 1810 թվականի սեպտեմբերի 5-ին Ախալքալաքի մոտ գեներալ Ֆ. Օ. Պաուլուչչիի կորաջոկատը ջախջախեց պասիկներին:

1812 թվականի փետրվարին նոր գլխավոր հրամանատար նշանակված Ն. Ֆ. Ռտիշչևը վերսկսեց հաշտության բանակցությունները Պարսկաստանի հետ, բայց 1812 թվականի օգոստոսին Աբբաս-Միրզայի 20 հազարանոց բանակը մտավ Թալիշ, գրավեց Լենքորանը: Բանակցություններն ընդհատվեցին, երբ Թեհրանում իմացան Նապոլեոնի կողմից Մոսկվայի գրավման մասին: Գեներալ Պ. Ա. Կոտլյարևսկին անցնելով Արաքս գետը, հոկտեմբերի 19-20-ին Ասլանդուզի մոտ ջարդեց պարսիկների 30 հազարանոց բանակը, իսկ 1813 թ. հունվարի 11-ին գրավեց Լենքորանը: Պարսկաստանը ստիպված էր հաշտություն կնքել (Գուլիստանի հաշտության պայմանագիր), որով նա ճանաչում էր Անդրկովկասի կզալի մասի միացումը Ռուսաստանին:

* * *

Պարսկաստանը Անգլիայի դրդմամբ, որի հետ 1814-ին Թեհրանում կնքել էր ստրկացուցիչ պայմանագիր, հաճախ խախտում էր հաշտության պայմանները և ետ պահանջում Ռուսաստանին անցած տարածքները: 1816 թվականի հոկտեմբերին Ռտիշչևին փոխարինած գեներալ Ա. Պ. Երմոլովը կարողացավ բարիդրացիական հարաբերություններ հաստատել շահի հետ: Սակայն 1826 թվականի գարնանը պարսկական արքունիքում հաղթեց Աբբաս-Միրզայի ռազմատենչ խմբավորումը: Եվ 1826-ի հուլիսի 16-ին, առանց պատերազմ հայտարարելու, պարսկական կորքերը ներխուժեցին Ռուսաստանի կայսրության սահմանները: Աբբաս-Միրզան 60 հազարանոց բանակով շարժվեց դեպի Թալիշ և Ղարաբաղ՝ Թիֆլիսի վրա արշավելու նպատակով: Առանձին պարսկական ջոկատներ շարժվեցին Լենքորանի, Բաքվի, Ղուբայի, Նախիջևանի վրա, հաջողվեց գրավել Ելիզավետպոլը, հուլիսի 25-ին պաշարեցին Շուշին: Ավելի քան 45 օր ռուսական կայազորը (հրամանատար Ի. Ս. Ռեուտ)՝ շուրջ 2 հազար մարդ և նույնքան էլ շրջակա գյուղերից օգնության եկած հայ աշխարհազորայինները, հերոսաբար դիմադրեցին և մինչև սեպտեմբերի 5-ը կաշկանդեցին պարսկական կորքերի առաջխաղացումը:

Սեպտեմբերի 3-ին ռուսական բանակի հայազգի գեներալ Վ. Գ. Մադաթովի ջոկատը Շամխորի մոտ ջարդեց պարսիկներին, սեպտեմբերի 5-ին գրավեց Ելիզավետպոլը: Աբբաս-Միրզան թողեց Շուշիի պաշարումը և շարժվեց Մադաթովի դեմ, որին միանալու էր շտապում գեներալ Ի. Ֆ. Պասկևիչը: Սեպտեմբերի 13-ին Ելիզավետպոլի մոտ ռուսական կորքերը (8 հազար մարդ) ջարդեցին Աբբաս-Միրզայի 35 հազարանոց բանակը և նրա մնացորդները շպրտեցին Արաքսից այն կողմ: 1827 թվականի մարտին Երմոլովին փոխարինեց Պասկևիչը:

1827 թվականի ապրիլի 2-ին ռուսական առաջապահ կորքերը, որոնց թվում և հայ կամավորական գնդերը գեներալ Կ. Խ. Բենկենդորֆի գլխավորությամբ, Ապարանի վրայով մտան Երևանի խանության սահմանները, ապրիլի 13-ին ազատագրեցին Էջմիածինը: Ապրիլի 17-ին պաշարեցին Երևանի բերդը: Իսկ մայիսի 13-ին ռուսական գլխավոր ուժերը Պասկևիչի հրամանատարությամբ մտան Երևանի խանություն և հունիսի 8-ին հասան Էջմիածին: Գեներալ Ա. Ի. Կրասովսկու դիվիզիային թողնելով Երևանի պաշարումը, Պասկևիչը գլխավոր ուժերով շարժվեց դեպի Նախիջևանի խանություն: Հունիսի 26-ին գրավեց Նախիջևանը, հուլիսի 5-ին Ջևան Բուլաղում պարտության մատնեց պարսկական բանակին, հուլիսի 7-ին հանձնվեց Աբբասաբադ ամրոցը:

Շոգի և հիվանդությունների պատճառով Կրասովսկին թողեց Երևանի պաշարումը և քաշվեց Աշտարակ: Աբբաս-Միրզան, իմանալով վիճակը, իր 30 հազարանոց բանակով թևանցեց ռուսական բանակը և պաշարեց Էջմիածինը: Տեղեկանալով այդ մասին, Կրասովսկին շտապեց Էջմիածնին օգնության: Օշականի մոտ հանդիպեց Աբբաս-Միրզային, արյունահեղ ճակատամարտում հաղթեցին ռուսները:

Ռուսական գլխավոր ուժերը Պասկևիչի հրամանատարությամբ սեպտեմբերի 19-ին գրավեցին Սարդարապատը, եռօրյա պաշարումից հետո՝ հոկտեմբերի 1-ին Երևանի բերդը: Այնուհետև Պասկևիչը արշավեց Նախիջևան, Թավրիզ: Գեներալ Գ. Ե. Էրիսթովի առաջապահ ջոկատը հոկտեմբերի 3-ին գրավեց Մանանդը, հոկտեմբերի 14-ին՝ Թավրիզը, ուր հոկտեմբերի 19-ին մտան գլխավոր ուժերը: Պարսկական կառավարությունը հաշտություն առաջարկեց, սակայն 1828-ին ռուս-թուրքական պատերազմի սկսվելու պատճառով բանակցությունները ձգձգվեցին: Ռուսական բանակի արագ առաջխաղացումը Պարսկաստանում և Ուրմիայի ու Արդաբիլի գրավումը հարկադրեցին Ֆաթե-Ալի շահին ընդունել հաշտության առաջարկված պայմանները: 1828 թվականի փետրվարի 10-ին կնքվեց Թուրքմենչայի պայմանագիրը, որով Ռուսաստանին անցան Երևանի, Նախիջևանի խանությունները և Օրդուբադի գավառը:

Ռուս-պարսկական պատերազմների ժամանակ ռուսական բանակին կզալի օգնություն (ռազմական, նյութական, բարոյական) ցույց տվեց հայ ժողովուրդը: Աչքի ընկան Ռուստամ բեկի, Գրիգոր Մանուչարյանցի, Մելիք-Աբովի, Մելիք-Ջումշուդ Շահնազարյանի գլխավորած հեծյալ ջոկատները: Շատ հայեր որպես ռազմական հետախույզներ ու կապավորներ մեծապես օգնեցին ռուսական կորքերին: Իրենց խիզախությամբ ու համարձակությամբ աչքի ընկան Հարություն Բաբիջանյանը, Վանի և Հակոբ Աթաբեկյան եղբայրները, Հովհաննես Ասլանյանը, Հարություն Մանուկյանը, Մկրտիչ Կոստանյանը, Համազասպ Եսայանը և շատ ուրիշներ:

1826-1828 թվականների պատերազմի ժամանակ կաթողիկոս Ներսես Ե. Աշտարակեցու և Հարություն Ալամդարյանի նախաձեռնությամբ ստեղծվեցին Հայկական կամավորական գումարտակները, որոնք ռուսների հետ միասին հերոսաբար մարտնչեցին: